ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2019/87

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Բողոքաբեր՝ «Անտարես» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Ա. Ասատրյանի,

«Անտարես» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Կիվիրյանի, Տ. Դավթյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով գնանշման հարցում, «Հայ Զինվոր» ամսագրի հրատարակման ծառայության ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Անտարես» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 06.11.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշումը, որով որոշվել է պայմանագիր կնքել «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ի հետ:
2. պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը (այդ թվում գնահատող հանձնաժողովին) կայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշում «Անտարես» ՍՊԸ-ի հետ:
3. խնդրամասի 2-րդ կետում նշված պահանջները չբավարարելու դեպքում, պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կազմակերպել նոր բանակցություններ, ապահովելով «Անտարես» ՍՊԸ-ի մասնակցությունը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 06.11.2019թ. և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, իսկ 12.11.2019թ.-ին և 21.11.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 21.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.12.2019թ.-ին:

2. <u>«Անտարես» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Անտարես» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

« 1. Գնանշման հարցման հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել է հայտարարություն գնանշման հարցման մասին (Գնանշման հարցման ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1»):

2. Հայտարարության համաձայն Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, հայտարարել է գնանշման հարցում, որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

3. Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով առաջարկվել է կնքել «ՀԱՅ ՁԻՆՎՈՐ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

4. Մասնակիցների համար հայտերի բացման օրը հանդիսացել է 17.10.2019 թվականը:

5. «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ն մասնակցել է մրցույթին կատարելով գնային առաջակ «ՀԱՅ ՁԻՆՎՈՐ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման նպատակով:

6. Բացի «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ից մրցույթին մասնակցել է նաև «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ն, սակայն, հաշվի առնելով այն, որ նվազագույն գնառաջարկը կատարվել է «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի կողմից, ուստի և հաղթող է ճանաչվել «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ն:

7. Ընդ որում, 18.10.2019թ. ծանուցմամբ, «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ն ծանուցվել է առ այն, որ՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով Գնանշման հարցման հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվել է «Անտարես» ՍՊԸ-ն: Միաժամանակ, տեղեկացնելով, որ 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը պարտավոր է հրավերով սահմանված կարգով և ժամկետում g.hakobyan@mil.am էլեկտրոնային փոստին ներկայացնել (ուղարկել) հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

8. Ստանալով նշված ծանուցումը «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ն ներկայացրել է նաև հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

9. Ընդ որում, նշված ընթացակարգերի հետ կապված բոլոր հարցերով զբաղվել է «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի աշխատակից Տաթևիկ Դավթյանը, ով մշտապես կապի մեջ է եղել Պատվիրատուի հետ հեռախոսակապի միջոցով: Ընդ որում, 21.10.2019թ. մինչև 02.11.2019թ. գտնվելով իր ամենամյա արձակուրդում, վերջինս կապ է հաստատել Պատվիրատուի հետ և տեղեկացրել առ այն, որ իր արձակուրդի ժամանակահատվածում որևէ հարցի ծագման առնչությամբ կապն իր հետ հաստատվի հեռախոսակապի միջոցով, որին ստացել է դրական պատասխան:

10. Վերադառնալով արձակուրդից, պարզվել է, որ Պատվիրատուի կողմից 23.10.2019թ. ուղարկվել է ծանուցում բանակցություններ կազմակերպելու վերաբերյալ, որով բանակցությունների հրավիրվել է «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ն ինչպես նաև «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ն:

11. Հաշվի առնելով այն, որ նշված ծանուցումն ուղարկվել է այն ժամանակ, երբ «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի աշխատակիցը գտնվել է ամենամյա արձակուրդում, իսկ Պատվիրատուն պայմանավորվածության համաձայն չի տեղեկացրել հեռախոսակապի միջոցով նշված ծանուցման վերաբերյալ, «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ն չի մասնացել բանակցային գործընթացին:

12. Արդյունքում, գնահատող հանձնաժողովի կողմից 01.11.2019թ. հաստատված թիվ 1.2. որոշմամբ, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման (այսուհետ՝ Որոշում) մասին, համաձայն որի որոշվել է պայմանագիրը կնքել «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ի հետ:

Գտնում ենք, որ Որոշումը կայացվել է օրենքի պահանջների խախտմամբ, Պատվիրատուն իրավունք չուներ նախ կազմակերպել բանակցություններ, բացի այդ բանակցություններն անցկացնել առանց «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի մասնակցության, ինչպես նաև կայացներ Որոշում Պայմանագիրը կնքել «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ի հետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի համաձայն՝

Գնում կատարելու ընթացակարգերն են՝

1) էլեկտրոնային աճուրդը.

2) մրցույթը.

3) գնանշման հարցումը.

4) մեկ անձից գնումը:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Գնումը կարող է կատարվել գնանշման հարցման ձևով, եթե գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, և գնման առարկան ներառված չէ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում:

Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝

Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝

1) հաստատում է հայտարարության և հրավերի տեքստերը.

2) փոփոխություններ է կատարում հրավերում.

3) պարզաբանումներ է ներկայացնում գնման ընթացակարգի վերաբերյալ.

4) բացում և գնահատում է հայտերը.

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Բաց մրցույթով գնում կատարելու համար մասնակիցներ ներգրավելու նպատակով տեղեկագրում հրապարակվում են գնումների հայտարարություն և հրավեր:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Մասնակիցը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 33-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին: Փակ մրցույթի դեպքում հայտերը հրավեր ստացած բոլոր մասնակիցների գրավոր համաձայնության դեպքում կարող են բացվել մինչև հրավերում նշված ժամկետը լրանալու օրը:

2. Հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

1) հայտ ներկայացրած յուրաքանչյուր մասնակցի անվանումը (անունը).

2) տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ.

3) տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

5) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված.

6) տեղեկություններ՝ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին:

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

1) տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

2) հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

3) տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

4) տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6) յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

7) տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

8) գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

9) տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

11) նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները:

8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, կամ

2) այն մասնակցին ընտրելու մեթոդով, որի առաջարկած գնին և ոչ գնային չափանիշներին տրված գործակիցների հանրագումարը ամենաբարձրն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հայտերը գնահատելիս հրավերով սահմանած դեպքերում և կարգով, առաջարկվող գնից բացի, հաշվի են առնվում ոչ գնային այլ չափանիշներ: Ոչ գնային չափանիշները պետք է փոխկապակցված լինեն պայմանագրի առարկայի հետ և դրանց

հարաբերական կշիռները ներկայացվեն հրավերի մեջ:

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

7. Սույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ գնահատման արդյունքում հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

8. Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

9. Հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: Պետական գաղտնիք պարունակող գնումների կատարման դեպքում սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Սույն պարագայում, գնանշման հարցման հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 1 որոշմամբ հաստատվել է հայտարարություն գնանշման հարցման մասին (Գնանշման հարցման ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1»): Համաձայն հայտարարության Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտարարել է գնանշման հարցում, որն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Գնանշման հարցումը վերաբերել է «ՀԱՅ ՁԻՆՎՈՐ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ծառայությունների մատուցմանը: «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ն

մասնակցել է հարցմանը կատարելով գնային առաջակ «ՀԱՅ ՁԻՆՎՈՐ» ԱՄՍԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման նպատակով: Ընդ որում, հարցմանը մասնակցել է նաև «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ն, սակայն, հաշվի առնելով այն, որ նվազագույն գնառաջարկը կատարվել է «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի կողմից, ուստի և «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող, որի վերաբերյալ «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ն ծանուցվել է 18.10.2019թ. ծանուցմամբ:

Նշված ծանուցումը ստանալուց հետո, «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ն Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով Պատվիրատուին է ներկայացրել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որին արդեն պետք է հաջորդեր հայտի գնահատումը և մասնակցի ընտրությունը:

Սակայն, Պատվիրատուն, Օրենքից չբխող և Օրենքով չնախատեսված հիմքերով կազմակերպել է բանակցություններ և 28.10.2019թ. հրավիրել բանակցություններ, հողում կատարելով Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներին:

Տվյալ դեպքում, Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝

1. Գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Ընդ որում, նույն ձևակերպումը սահմանված է նաև ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-

րդ կետի 5-րդ ենթակետով:

Նշված իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ բանակցությունները կարող են կազմակերպվել և վարվել բացառապես հետևյալ պայմաններում՝

Ա) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին,

Բ) հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ,

Գ) առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում,

Դ) եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Սույն պարագայում, առկա չի եղել վերոթվարկյալ դեպքերից որևէ մեկը, ինչպիսի պայմաններում Պատվիրատուն իրավասու չէր կազմակերպելու բանակցություններ:

Բացի այդ, Կարգի համաձայն՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները):

Տվյալ դեպքում, եթե նույնիսկ ընդունենք, որ Պատվիրատուն օժտված էր բանակցություններ կազմակերպելու իրավասությամբ, ապա վերջնս պարտավոր էր նաև բանակցությունների վարմանը ապահովել նաև «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ին, ինչը չի կատարվել (նշված փաստի վերաբերյալ տվյալները ներկայացվել են սույն բողոքի Փաստեր բաժնում):

Ավելին, «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի մասնակցությունը բանակցություններին ապահովելու պայմաններում հնարավոր է, որ «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ն առաջարկեր ավելի նվազ գին քան «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ն, որը կատարել է նվազեցում «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված գնից ընդամենը 145.000 ՀՀ դրամի չափով:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության և գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են «ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ-ի իրավունքները, ուստի այդ խախտումները ենթակա են վերացման:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Անտարես» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. անվավեր ճանաչել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշումը, որով որոշվել է պայմանագիր կնքել «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ի հետ:

2. պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարությանը (այդ թվում գնահատող հանձնաժողովին) կայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշում «Անտարես» ՍՊԸ-ի հետ:

3. խնդրամասի 2-րդ կետում նշված պահանջները չբավարարելու դեպքում, պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կազմակերպել նոր բանակցություններ, ապահովելով «Անտարես» ՍՊԸ-ի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 07.11.2019թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հնարավորություն տալով «Անտարես» ՍՊԸ-ի կողմից 06.11.2019թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 13.11.2019թ.-ի թիվ Մ-51009-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 07.11.19թ. թիվ /ԲՔԱ-Լ0/2/18396-2019 գրությամբ ներկայացված ՀՀ ՊՆ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով անցկացված գնման ընթացակարգի վերաբերյալ «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի՝ հայտնում եմ հետևյալը.

Հիշյալ ընթացակարգի շրջանակներում 17.10.2019թ. գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրությամբ (gnumner.am կայքում հրապարակվել է 18.10.2019թ.) «Անտարես» ՍՊԸ-ին ճանաչել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից և մասնակցին առաջարկել ներկայացնել հիշյալ ծածկագրի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը: Սակայն հանձնաժողովի համար հետագայում պարզվել է, որ հիշյալ որոշումը տեխնիկական սխալի արդյունք է, այդ պատճառով 23.10.2019թ. նորից իրականացրել է գնահատման նիստ և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներն վերանայել է թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումը և «Անտարես» ՍՊԸ-ին ու «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ին գների նվազեցման նպատակով

առաջարկել է 28.10.2019թ. կազմակերպել բանակցություններ, որը ոչ ավտոմատ ծանուցմամբ տեղեկացվել է մասնակիցներին: 28.10.2019թ. հրավիրված բանակցություններին մասնակցել է միայն «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ն, որը առաջարկել է առանց ԱԱՀ 40,4 մլն դրամ և ճանաչվել առաջին տեղը զբաղեցրած մասնակից: Թիվ 3 արձանագրության շտկված տարբերակը gnumner.am կայքում հրապարակվել է 28.10.2019թ.:

Ինչ վերաբերում է հեռախոսազանգով պայմանավորվածությանը, ապա հայտնում եմ, որ նման տեղեկատվության չենք տիրապետում, ավելին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նման մոտեցում սահմանված չէ, իսկ հանձնաժողովի կողմից իրականացված գործառույթներն՝ տեղեկագրում հրապարակումներն և ոչ ավտոմատ ձևով ծանուցումը բխում է օրենսդրության պահանջից, որն էլ պատշաճ իրականացվել է:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/87 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից «Հայ Զինվոր» ամսագրի հրատարակման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով (այսուհետ՝ Հավելված 1) սահմանվել է, որ ծառայությունների մատուցումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում և վճարումները կիրականացվեն համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով նախատեսված ժամկետում

7.6 կետի համաձայն՝ հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները

գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 7.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսական միջոցները կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել «Անտարես» ՍՊԸ-ն և «Փաբլիսի Հեպտա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 17.10.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Անտարես» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 23.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ (շտկված) 25.10.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները որոշել է գների նվազեցման նպատակով 28.10.2019թ.-ին ժամը 10:15-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել «Անտարես» ՍՊԸ-ին և «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ին հետ բանակցություններ:

Նույն արձանագրության համաձայն՝ 28.10.2019թ.-ին հրավիրված բանակցությանը «Անտարես» ՍՊԸ-ն չի ներկայացել, իսկ «Փաբփսիս Հեպտա» ՍՊԸ-ի լիազորված անձը վարված բանակցությունների արդյունքում իր կողմից առաջարկված առանց ԱԱՀ 42 075 000 ՀՀ դրամը, նվազեցրել է սահմանելով՝ առանց ԱԱՀ 40 400 000 ՀՀ դրամ գումար և ներկայացված գնային առաջարկի հիման ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 23.10.2019թ.-ին ծանուցում է ուղարկվել «Անտարես» ՍՊԸ-ին և «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ին 28.10.2019թ.-ին ժամը 10:15-ին ՀՀ ՊՆ

ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կայանալիք բանակցությունների մասին:

Հանձնաժողովի 01.11.2019թ.-ի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված/հաղթող/ մասնակից և նույն օրը www.gnumner.am կայքում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Անտարես» ՍՊԸ-ի կողմից 06.11.2019թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված հոդվածների վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «Հայ Զինվոր» ամսագրի հրատարակման ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-

ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով, հայտ են ներկայացրել «Անտարես» ՍՊԸ-ն և «Փաբլիսի Հեպտա» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 17.10.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Անտարես» ՍՊԸ-ն և վերջինիս առաջարկվել է ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 23.10.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ (շտկված) 25.10.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները որոշել է գների նվազեցման նպատակով 28.10.2019թ.-ին ժամը 10:15-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել «Անտարես» ՍՊԸ-ին և «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ին հետ բանակցություններ, ինչի վերաբերյալ քարտուղարի կողմից 23.10.2019թ.-ին ծանուցում է ուղարկվել մասնակիցներին:

28.10.2019թ.-ին հրավիրված բանակցությանը «Անտարես» ՍՊԸ-ն չի ներկայացել, իսկ «Փաբփսիս Հեպտա» ՍՊԸ-ի լիազորված անձը վարված բանակցությունների արդյունքում իր կողմից առաջարկված 42 075 000 ՀՀ դրամ գումարի չափով գնային առաջարկը նվազեցրել է սահմանելով՝ 40 400 000 ՀՀ դրամ գումար (առանց ԱԱՀ) և ներկայացված գնային առաջարկի հիման ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.10.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության հիման վրա Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Անտարես» ՍՊԸ-ն (ներկայացված գնային առաջարկների հիման վրա) և որոշվել է վերջինիս առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելով որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու առաջարկ:

Ընկերությունը, հիմք ընդունելով Հանձնաժողովի վերոնշյալ արձանագրությամբ կայացված որոշումը, ներկայացրել է նույն արձանագրությամբ պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը, շտկելով իր կողմից 17.10.2019թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությունը, 25.10.2019թ.-ին, հիմք ընդունելով Օրենքի 38-րդ հոդվածի և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, որոշել է գների նվազեցման նպատակով 28.10.2019թ.-ին ժամը 10:15-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել «Անտարես» ՍՊԸ-ին և «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ին հետ բանակցություններ:

Համադրելով վերը նշված հանգամանքները Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով նախատեսված սկզբունքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելուց հետո «Անտարես» ՍՊԸ-ին բանակցության հրավիրելու պայմաններում Ընկերության համար մրցակցության հավասար պայմաններ չի ապահովվել, ինչպես նաև գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ է առաջացվել: Հանձնաժողովը պետք է ոչ թե 1-ին տեղ զբաղեցնող ճանաչեր Ընկերությանը և առաջարկեր ներկայացնել համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր, այլ պետք է «Անտարես» ՍՊԸ-ին և «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ին հետ կազմակերպեր բանակցություններ:

Բողոքներ քննող անձը հավելում է, որ նման պայմաններում Պատվիրատուն չի ապահովել Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքների պահանջների կիրառումը (գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Անտարես» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և պետք է բավարարել՝ վերականգնելով Ընկերության գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը, որի արդյունքում կապահովվի Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Անդրադառնալով Ընկերության կողմից ներկայացված բողոքի մյուս՝ «Անտարես» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու մասին որոշում կայացնելու պարտավորեցնելուն, ապա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների՝ «Անտարես» ՍՊԸ-ին և «Փաբլիսիս Հեպտա» ՍՊԸ-ի հետ պետք է վարեր միաժամանկյա բանակցություններ, եթե հայտերի բացման նիստին ներկա լինեին մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները), իսկ մասնակիցների և վերջիններիս ներկայացուցիչների բացակայության պայմաններում գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային ձևով ծանուցում է մասնակիցներին՝ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին՝ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները և այն հանգամանքի հաշվառմամբ, որ գնման ընթացակարգը հայտարարվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, բանակցություններ հրավիրելով, գործել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի իմպերատիվ (պարտադիր) դրույթների շրջանակներում, վերջինիս գործողությունները իրավաչափ են և չեն հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի այս մասով բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Անտարես» ՍՊԸ-ի կողմից 06.11.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/87 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-20-12/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշումը,

2. կազմակերպել նոր բանակցություններ, ապահովելով (ծանուցելով) «Անտարես» ՍՊԸ-ի մասնակցությունը:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ